




ՀԱՆԳԻՍ

†

Ի ՏԷՐ ՀԱՆԳԵԱՒ ԳԵՐՇ. Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
(1932-2017)

Սրտի խոր կսկիծով կը գուժենք մահը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններէն Գերշ. Տ. Մեսրոպ Արք. Գրիգորեանի, որ տեղի ունեցաւ 14 Յունուար, 2017-ին, 85 տարեկան հասակին:

Լուսահոգի Սրբազանը մեր Սուրբ Եկեղեցւոյ վաստակաշատ սպասատուներէն է, որ երկար տարիներ ծառայած էր Առաքելական մեր Սուրբ Եկեղեցիին եւ հաւատատու մեր ժողովուրդին:

Շաբաթ, 21 Յունուար, 2017-ին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ մատուցուած Սուրբ եւ Անմահ Պատարագի վերջաւորութեան կատարուեցաւ հանգուցեալ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Արք. Գրիգորեանի հոգեհանգստեան պաշտօնը:

Սրբոց Յակոբեանց ամբողջ Միաբանութիւնը կը սգայ հանգուցեալ Սրբազանի մահը եւ կ'աղօթէ իր հոգւոյ լուսաւորութեան եւ երկնային արքայութեան արժանանալու համար:

«Յիշեսցէ Տէր զհոգի ծառային Իւրոյ եւ հանգուցէ զնա ի լոյս երեսաց Աստուածութեան Իւրոյ. ամէն»:

ԳԻՒԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ